Armenian Research & Academic Repository

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

The licensor cannot revoke these freedoms as long as you follow the license terms.

Under the following terms:

- **Attribution** — You must give appropriate credit, provide a link to the license, and indicate if changes were made. You may do so in any reasonable manner, but not in any way that suggests the licensor endorses you or your use.
- **NonCommercial** — You may not use the material for commercial purposes.

14648
14649
14650
14651
14652
14653

1. Մի քանի խոսք Յովսէփ Էֆէնդեանցի վերայ Թիֆլիս 1872
2. Սարուխանի Ա. «Սահակ Պարթև կամ Հայրապետ Մեսրոպ Կ. Պոլիս 1869
3. Հերքումն գրախնդիր վայրաբանութեանց [illegible] Մոսկվա 1861
4. Աբել Միրզաբէկեանց: Հայոց ազգի քաղաքական վիճակը: Մոսկուա 1862
5. Տէր-Մելքիսեդեկեանի: Մի համառօտ հայեացք XIX դարի հայ հոգևորականութեան վրայ: Թիֆլիս 1874
6. Մանդինեանց Ստ. «Հայ[ե]լի պատմաբանութեան տղայոց: Տփխիս 1859

347.6
Ն-67

81(=91.54)
Տ-48

# ՄԻ ՀԱՄԱՌՕՏ ՀԱՅԵԱՑՔ

## XIX-Դ ԴԱՐԻ ՀԱՅ ՀՈԳԵԽՕՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

այլ և

*Ներսէս Ե-ը հարևանցի համեմատութեան մէջ Մխիթար Սեբաստացու հետ։*

Հեղինակութիւն

Գ. ՏԷՐ-ՄԵԼՔԻՍԵԴԵԿԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍ։

1874.

281.6

Գ. Տեր-Մելքիսեդեկյան

(Մի համառոտ հայացք
XIX դարի հայ հոգևորականու-
թյան վրա)...

(52-36)

Թիֆլիս 1874 թ.

# ԱՌԱՋԻՆ ԽՕՍՔ։

Ինչպէս է ներկայանում մեզ այսօրեան օրս հոգեւորականութիւնը իւր մտաւոր դրութիւնով,—ահա մեր միտքը գրաւող հարց այս րոպէիս մէջ։

Սառն պատմական կէտից նայելով, նա ստորադրվում է, ինչպէս և ամէն մի անհատ, նոր մտքերի ազդեցութեան, որոնցը միշտ յառաջ է բերում գործնական կեանքի անսպառելի կարիքը։ Էջմիածնական կղերականութիւնը, եթէ չենք սխալվում, այդ հոսանքի ազդեցութիւնից սարսափած, ձեռք է զարկում, իւր ասես թէ, ընդհատուած գործունէութիւնից։ Նա զգում է մտաւոր կեանքի կարեւորութիւնը. բայց այդ կեանքը, սահմանափակ դրութիւն ունենալով, սնանվում է նախնիներից աւանդած դժուարամարս (եթէ չասենք անգործադրելի) կերակուրներով և հետաքրքրվում մի միայն հնութիւններով. խիստ քիչ անգամ նա դառնում է դէպ 'ի կենսանիւթական պահանջները, որոնցից կախուած է որ և է ժողովրդի իրական դրութիւնը։

Տպարանի տառերը նորոգ ձուլուեցան, ընկան շարժողութեան մէջ. սկսեցին հրատարակուիլ շատ աշխատութիւններ, որոնց մէջ աւելի աչքի առաջև է ընկնում «Արարատ» ամսագիրը, իբրև մեծամասն արտայայտութիւն վերոյիշած էջմիածնական կեանքի։

Փո՛րձ փորձենք տեսանել այդ կեանքի գոյութեան պայմանները այս վերջին անցած երեք տարիների մէջ։ Թերթե՛նք անկիրք պատմաբանի աչքով 1871-ից սկսած մինչև 1873-ը դուրս եկած Համարները, եթէ արդարև, թա՛նկ էր մեր սրտին որսալ նորա գոյութիւնից մի բան։

Գ. Տէր-Մելքիսեդեկեան։

# ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ

Հարևանցի հայեացք (coup d'oeil) կլերական գոր-ծունէութեան վերայ, 1871 թվում:

1) Սրօն և մարդ, շուտ-ու-ոչնչատիպական վարդապետութիւն կամ գոկտորութիւն է:
2) Վանորայք — միակողմանի, ասցիալ՛ական սկիզբներին հակառակ, ուրիշ և, ոչնչատիպական:
3) Հայ—Ազգութիւն, լոկ Փրազներ—ոչինչ":
4) Ով հայրենիս իմ, ոչինչ":
5) Դեօլ՛ինգերի գործ, թէ և միակողմանի, բայց ինչ և է կիսա-գործնական հայեացք:
6) Եկեղեցի—ոչինչ"
7) Մի երիտասարդի յօղուած—գործնական:
8) Յովհան մարգարէ և այլ ոտանաւորներ—ոչնչ՛ատիպական:
9) Զորս գրաբար ճառեր—բառեր առանց իմաստի, ոչինչ":
10) Բահանայի գրութիւն—անհիմն գործնական հայեացք:
11) Բարոզ—Ս խմահմուտի մէջ,—մոլար մտքեր—ոչինչա":
12) Եկեղեցու միութեան մեկնութիւն, հիմնած միայն հեղինակութեան վերայ, ոչինչա"
13, 14, 15) Տարաբաղդ հայ-մամուլ, Պատմական յարաբերութիւնը, Հովիւ և հօտ—պարապ մտքի խաղալիկ, ոչինչա":
16) Դամբանական ճառ—ոչինչ":

17) Միութեան մեկ". շար".—սխոլաստ":
18) Կրօնա-պատմական (քաղաքական) անցքեր—գործ":
19) Ուսումնարանական քննութեան նկարագիրը—գործնական":
20) Ի ծով կենցաղոյս եայլն, կրօնական ոտ".—սխոլաս":
21) Խարդաւանք ընդ անուամբ Քրիստոսի—սխոլաս".
22) Քաղաքական օրէնսդիտութեան նշ".—գործնական:
23) Պաղատանք առ էակն համայնից—սխոլ":
24) Պարզ գրաբար ոտանաւոր, թեթև գործնական կեանքից:
25) Անհիմն պաշտպանող գործնական հայեացք—Դպրէվանք:
26) Կրօնական դիտողութիւն—սխոլաս".
27) Թղ. օր. նշ. շար.—զուտ գործնական
28) Տեսարան դաշտին Շաւարշական — անհիմն սխոլաստիկա-կանութեան:
29) Անցք իսրայելացւոց ընդ ծովն կարմիր—սխոլաս":
30) Լոյս և խաւար, սխոլաս"
31) Ծանուցումն—սխոլաս":
32) Սիսի խնդիր—կրօնա-քաղաքական—գործնական:
33) Դիտողութեան շար".—սխոլաս":
34) Ո՞րտեղ են մեր մայրերը—գործնական:
35) Ծնողաց իրաւունքը որդւոց վերայ—սխոլաստիկական:
36) Ճա՛ռ և ընկեա՛—սխոլաս":
37) Ծանուցում—սխոլ՛աստ":
38) Պաւլոսի և ձաշոցի տպագրութիւնը—իբրև դարերի աւանդութեան պահպանողական խրախոյս:

Այդ երեսուն և ինն յօդուածներից 23-ը սխոլաստիկական ուղղութեան են, ինչպէս կարելի է տեսանել վերևում, 8-ը գործնական, և 8-ը, 'ի մէջ գործնականի և սխոլաստիկականի, որոնք միայն թէ, աւելի հակումն վերջինիս օգտի համար:

Հարևանցի հայեացք (coup d'oeil) կղերական գործունէութեան վերայ, 1872 թվում:

1) Ծանուցում, թէ և թոյլ, բայց գործնական հայեացք:

2) Սուրբ եւ տէր հարցի մեկնութիւն—ախող'տատեխտաչան.
3) Քրիստոս 'ի գետն Յորդանան—ախող'տատեխտաչան:
4) Շփարցի կրօնա-դաստիարակական հայեացք, գործ'նա":
5) Դաստիարակութիւն մանկանց—գործ'ն":
6) Կաթող'իկոսական կոնդակ—գործ'նական:
7) Մերոնց ամուսնական կենաց նկատմամբ մի քանի խօսք—գործ'նական:
8) Պտուղ ցանկալի—ախող'տատ"
9) Շփարցի հայեացքի շար". գործ'նական:
10) Մանուկների դաստ". շարունակութիւնը—գործ'ն":
11) Խմբագրութեան ողջոյն—գործ". կեանքի երեւոյթ:
12) Օփնուորատլութիւն,—գործ'նական:
13) Սուտ կաթող'իկոսութիւն—գործ'նական:
14) Կրօնական ժողով.—գործ'նական:
15) Շմբաստանութիւն մը—գործ'նական:
16) Պտուղ ցանկալի—ախող'տա":
17) Դաստացութիւն կրօնի—ախող'տատեխտաչան:
18) Օրէնսգիտ. նշ".—գործ'նական:
19) Ծանուցում—գործ'նական երեւոյթ:
20) Կրօնի դաստացութիւնը—թոյլ' գործ'նական:
21) Մի քանի բան արեղայութեան առիթով—թոյլ գործ'ն":
22) Ուսումնարանական յօդուածներ—թոյլ' գործ'նական:
23) Յանկ. Պաղի շար" ախողտատեխտաչան:
24) Ուսումնարանական հաշուետուութիւններ—գործ'նական:
25) Ուսումնարանի հաշուետուութեան կէսը—գործ'նական:
26) Յանկ. պտ. շար".—ախողտատեխտաչան:
27) Խաղի նշանակութիւնը կրթութեան մէջ—գործ'նական:
28) Ուս. գրուածներ—գործ'նական:
29) Կրիտ". քննութիւն մանկական գրքի վերայ—գործ'նական:
30) Յանկ. պտ. շար".—ախողտատեխ ական:

31) Խաղի նշ''. շար''. գործնական:
32) Ուսումնարանական տեսութիւններ—գործն''.
33) Ուսումնարանական հաշիւ—գործնական:
34) Մանկ. գրքի քննութեան շար''.—գործնական:
35) Խաղի նշ''. շարունակութիւնը—գործնական:
36) Սանատրուկի փախճանը—թոյլ գործնական:
37) Ուս'' տեսութիւն—գործնական:
38) Ուս'' հաշիւ''—գործնական
39) Մանկական խաղի շարու''—գործնական:
40) Համակրութիւն Հայաստ''. եկեղեցւոյ—սխոլաստ'':
41) Պատմութիւն և օգուտ նորա—թոյլ գործն'':
42) Սանատր''. փախ''. շար''.—թոյլ գործնական:
43) Դպրոց Բժիշկի և պատճառ յետամնութեան—գործն'':
44) Մանկ''. գր''. քննու''. շար''—գործնական:
45) Գրաբար ճառեր—անհիմն սխոլաստիկական:
46) Պաշտօնական ծանուցում—գործն''. երևոյթ:
47) Նօթն խորհ''. եկեղեցւոյ—սխոլաս''.
48) Պ.ղխ''. աղբիւրք պատմութեան—թոյլ գործն'':
49) Ակզբ''. բացատր''. բն. եր''.—գործնական:
50) Յուսին Մովսէսի յերկրկրդումն պատառէ զծովն կարմիր—շատ սխոլաստիկական:
51) Ընի գրաբար ոտանաւոր—սխոլաստ''.
52) Ծանուցում—Տոլոր և ճշտակէր գործնական հայեցք:
53) Յաղագս թէ պէտք են Աստուածային պաշտամունք —սխոլաստիկականութիւն:

Այդ յիսուն և երեք յօդուածներից 30-ը գործնական ուղղութեան են, 14-ը սխոլաստիկական, և 9-ը—'ի մէջ գործնականի և սխոլաստիկականի, որոնք, հակառակ 1871 թուի հակումեն գործնական ուղղութեան օգտի համար:

Հարևանցի հայեացք (coup d'oeil) կղերական գոր-ծունէութեան վերայ, 1873 թվում։

1) Եկեղեցու եօթն խորհուրդները, աշխ''—հիմնած աւտո-րիտէտի վերայ.
2) Ըն. եր''. գործնական
3) Համառօտ ուսումն. հաշիւ—գործնական։
4) Քաղաքական յօդուած Պօլսի կեանքից—գործնական։
5) Եօթն խորհ. շար''.—աստուածաբանական
6) Ըն. եր. շար.—գործնական։
7) Արդարն 'ի բանտի—գործնական
8) Հաշիւ—գործնական։
9) Ամենուրեք Հայոց եկեղեցականաց պարտաւորութիւնք—գործնական։
10) Ըն. եր. շար''.—գործնական
11) Հայ-ազգն 'ի հաւատս և 'ի յառաջադիմութիւն—գործ''
12) Էջմիածնի մեծարելը օտար քաղաքագէտ անձնեըի—գործնական երևոյթ։
13) Ուսումնա''. նկարագրութիւն—գործնական
14) Նպաստ—գործնական
15) Ուսումնարանական հաշիւներ—գործնական
16) Կրօնա-քաղաքական անցքեր—գործնական։
17) Հոգևոր ուսումնարանք—գործնական
18) Ուսումն. հաշիւներ—գործնական
19) Նկարագրութիւններ—գործնական
20) Կրօնա-քաղաքական անցքեր—գործնական
21) Մի կրօնական յօդուած— գործնական
22) Ժողովրդական ուսուցչի ինքնակրթութիւնը—գործն''.
23) Ճահն 'ի Տփխիս—գործնական երևոյթ
24) Ուս. հաշիւ—գործնական։

25) Ուսումն". Նկարագրութիւններ—գործնական
26) Եկեղեցականք և ժողովուրդք—գործնական։
27) Դաստիարակութիւն 'ի մարդն—'ի մէջ գործն". և «խօսք"։
28) Պարզ տօմնաւորներ—ըստ մեզ «խօսակցական".
29) Տաք կրօնա-քաղաքական խնդիրներ—գործնական
30) Եկեղեցականք 'ի հալածանս—գործնական.
31) Ընտանիքական և Փիզիոլ'ոգիքական յօդ.—գործնական։
32) Դաստիարակութիւն մանկանց Հայոց—գործնական։
33) Արկածք Հայաստանի, գրաբար յօդ.—խօսակցական։
34) Կոնդակ, թէ և գրաբար, բայց գործնական։
35) Կրօնա-քաղաքական խնդիրներ—գործնական։
36) Մի քահանայի յօդուած—գործնական։

Այդ երեսուն և վեց յօդուածներից, երեսունը—գործնական ուղղութեան են, չորսը խօսակցական և երկուսն—'ի մէջ խօսակցականի և գործնականի։

## Մի նկատողութիւն։

Այդ երեք թուական րէզուլտատների համեմատութիւնից պարզ կերպով տեսանելի է, որ էջմիածնական ուղղութիւնը հետ-զհետէ հեռանումէ չոր սխոլաստիքական աշխարհից, որտեղ միայն թագաւորումէն աստուածաբանութիւն և համոզման քարոզչութիւն, մօտենալով գործնական կեանքի կարիքներին. տարէ-տարի իւր թերթերի երեսից նուազումէ խօսակցական յօդուածների թիւը, և նորա փոխարէն, աւելանում գործնականների թիւը։ Այս, մի նոր նշան ևս ժամանակի անընդհատ յառաջդիմութեան։

Այժմ բերենք այստեղ մի քանի երևոյթներ մեր Հայ-հոգևորականութեան գործնական կեանքից։

1872 թուի «Մեղու»-ի 13-դ №-ում Մ. Ս-եի ֆե-լիէտոնական գրութիւնը ձևակերպում Տէր-Մինաս քահանա-յի քարոզը, որ, ըստ մեզ, կարող է խելագար մտքի և հի-ւանդոտ երևակայութեան արգասիք համարուել. քարոզի մէջ, հայ հոգևորականի կարծիքով, Մամիկոնեան Վարդանը Նա-հատակ է եղել հայերի (?!), այլ և, ինչպէս երկնային զուար-ճուն նահատակ հրեշտակներ կան, նոյնպէս և երկրի մէջ—դժոխքում սատանաներ են բնակվում, այն է՝ երկոտաւոր, չորս ոտքաւոր և մէջ պոչաւոր........ Նա՝ քարոզը, նկարագրում սատանաների ուրա-խութիւնը, որը յառաջ է բերում մեղաւորի հոգեհանութիւնը, Գր. հրեշտակի ձեռով......նա կարծում նոյնպէս որ հայ Նա-հատակ (!) Վարդանի գահը եղել է երբեմն, Ամերիկայ քա-ղաքում (!)։ Նա կարծում ուրիշ շատ բան ևս....

Թէ և չէ տալիս մեզ, իր հաստատութեան համար, ոչինչ փաստական բան այդ գրուածը, ա՛յն ամենայնով, նա կատարելապէս կարող է, ըստ մեզ, յարագրուել մեր հոգևո-րականութեան մի մասի կեանքին, և ես ընդունում եմ նո-րան իմ ստատիստիքական տեղեկութիւնների թւում, այնքա՛ն նա իրական է մեզ համար։

Նոյն թուի 29 №-ում մի նամակ յայտնում, որ մի քահանայ, տեսանելով մեռանողների թուի աննշանութիւնը, գիշերը մղդսու օգնութիւնով եկեղեցում դանուած դիակը շուռ է տուել, այն նպատակով, որ այդ շրջումը կարող էր, նորա կարծիքով, յաւելացնել մեռանողների թիւը...

1873 թուի 19-դ №. Մ-ի հոգևորական արդելք է եղել օրինաւոր պսակի, որի հետևանքը եղել է այն՝ որ պսակուա-ծը մտադրուել է Երևանի օտարազգի եկեղեցում պսակուել։

№ 21. Շ. գիւղում մի քահանայ, ըստ սովորութեան իւր ժողովրդի նոր շորերի թէ գոյնը, թէ արժէքը գրում, որ կողոպուտ տալիս չթագուցանէին իւրեանից։

№ 22. Ա. քաղաքում մի աննպատակ և շրջմոլիկ վարդապետ իւր խելքի մարդեր գտանելով, խաբում է նորանցը նիւթական նպաստ ստանալով նորանցից. այլ և, մի յոյն տեղական ժամանոյ ցանկացաւ տալ իւր դուստրը հայ օրիորդական վարժարանի մէջ, ենթարկելով նորան բոլոր ուսումնարանական պայմաններին, բայց տեղական վարժապետը չընդունելով օրիորդին, ասաց, որ եւրոպացիների ազգաւորեան աղջիկներ կարող են կրթուել մի միայն իւրեանց մայրենի լեզուով (!):

№ 27. Ալէքսանդրոպոլ՚ի եկեղ՚եցու մէջ, մինչ պատկող քահանան պսակատարման մէջ փող էր պահանջում պսակուող մարդից, որը ձեռում նա պատրաստ չունէր, վերջինս դուրս է գնում, կինուամուսինը միայն թողելով այնտեղ, և այլ ևս չէ դառնում:

№ 28. Սաղեան գիւղի ծխական քահանան բռնաբարե՛լ է մի հարս, որ յաջողութիւն չէ գտել. ուստի, կամեցել է անձնասպան լինել, թէ և նա չէ յաջողուել.... սակայն 33 №-ը սուտ է հանում այդ լուրը:

№ 26. Թիֆլիսի ս. Կ. եկեղեցում, մինչ ժողովուրդը կամենում էր ըստ տօնի սովորութեան համբուրել եկեղ՚եցու սեղանը, նորան փակած գտաւ. մի երիտասարդ բանալով դուռը, գտաւ այնտեղ մի տիրացու չորս մարդերի հետ քէֆի մէջ, որ, տեսանելով ժողովրդի մուտքը, բղաւեց. «ա՜յ դուք, աւազակներ..»:

32-դ №-ը յայտնում է, որ երկու օրի մէջ կատարելի գործերը կոնսիստորիաներում ամիսներով են յետաձգում: Այլ և մի քահանայ, որի աշխատանօք փակուել է մի ծխական վարժարան, ինքն տան մէջ սկսել է տղաներ հաւաքել. երբ այն բանի համար մին առաջարկում է մի ուրիշն Առաջնորդի՝ ուշք դարձուցանել այս անկարգութեան վերայ,

յիշած հոգևոր առաջնորդողը, ասումէ. «Հէլա մի մտածի՛ր ի՞նչ ես խօսում.... մի՞թէ վատ է արել...»։

Նոյն № Մի քահանայ Ն-էի մէջ պատարագին սկսել է սաստիկ վիճել օրհնողական վարժարանի վարժուհու հետ այնով, որ մեծ անկարգութիւն է, օրհնողներին խաչվառ և քշոց ման ածել և եկեղեցում ժամ ասել.....։

№ 36. Մի կոնսիստորիայի յայտնի պաշտօն կատարող, ասուած է, մինչ կաշառ չէ ստանում, չէ գրում մետրիքական վկայութիւնը։ Նամակի հեղինակը յաւելացնումէ. Չգիտեմք մեր հոգևոր ատեանները ե՞րբ պէտք է կարգաւորուեն։»

№ 37. Ն. Բ. քաղաքի մէջ, սոյն 1873 ամի Սեպտեմբերի 15-ին ուղարկուել է Գէորգ կաթողի՛կոսից մի վարդապետ, որի քարոզը յիշած կաթո՛ղիկոսին Գրիգոր Լուսաւորչից գերադասելով, միւսների թվում, ասումէ, որ Ներսէս կաթո՛ղիկոսի ժամանակ, երբ կմնէիր վեհարանը, մարդոյ ոտները և հագուստի փեշերը թողի և հողի մէջ կկորչէին, բայց այժմ մեր լուսաւորիչ Գ. վեհափառ կաթո՛ղիկոսն այնպէս է զարդարել և գեղեցկացրել նոյն վեհարանն, որ շինել է մէկ հոյակապ պալատ և Նոյն նորա մէջին վայելումէ իւր հայրապետական փառքն. միով բանիւ նա Էջմիածինն այժմ այնպէս է նորոգել և զարդարել շքեղութեամբ, որ եթէ գնաք տեսնէք, էլ չէք ճանաչել այն առաջուան Էջմիածինն և կաթողիկոսի վեհարանն, օրհնեալ էք և օրհնեալ լինիք, ամէն։»

## «ՄՇԱԿ» 1873 Թ.

№ 17 Շ-ում հայ կաթո՛ղիկոսը, կոնդակով Անդրէաս արքեպիսկոպոսի առաջարկութիւնով, արձակել է եկեղ՛եցական պաշտօնից, պատուիրելով հարկատուններին թվում հա-

մարել 2 քահանաներին, իւրեանց ծայրահեղ մոլեռանդների պատճառով։

№ 18. Մի քահանայ դաւաճանում է իւր յանձնարարութիւնը, ձգելով գերեզմանաքարը, ոչ ըստ նշանակութեան, այլ իւր «քանի մի տարով յառաջ վախճանած համանունի եղբօր գերեզմանի վերայ»։

## ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԱՆՈՒՄՆ։

Մտածմունք հայ հոգեւորականութեան կարծիքների հետ։

1874 թուի մայիսի «Արարատ» ամսատետրի առաջնորդող յօդուածի համեմատ, կրօնը ստեղծած է ընդում մարդու տղայ մտածութեան, որ մարդը արժանանայ յաւիտենական երջանկութեան. ոչինչ այնքան չէ կարող սանձել ժողովրդին, որքան կրօնը. կրօնը ժողովրդի վերայ իշխելուն նպաստամատոյց է լինում։» Իբրև լուծումն այդ մտքերի, նոյն տետրի «Վանօրայք» անուն յօդուածը, ցաւելով վանքերի աւերածութեան վերայ, ասում է որ «վանքերն աշխարհից մեկուսացող և անմահ կեանքին սիրահար մարդերի բնակարաններ են։»

Յառաջ, քան փորձ փորձենք մաքառելու էջմիածնական կղերի կարծիքների հետ, որոնցը ինչպէս յայտնի է, բաժանում և բոլոր հայ-հոգևորականութիւնը, — խնդրում ենք ընթերցողներից, դառնալ դէպ 'ի մեր «Մի նկատողութիւնը» այս աշխատութեան առաջին բաժանման մէջ, որտեղ էջմիածնական կղերականութեան տարեկան աշխատութիւնների համեմատութիւնից պարզ տեսանվում է, որ նորանք, չնայելով իւրեանց ցանկութեան՝ ապրել հնութեան

կարծիքներով,—ա՛յն ամենայնով մօտենումեն կամաց-կամաց դէպ'ի գործնական կեանքի խնդիրները: Այդպիսի երեւոյթ միայն հայ հոգեւորականութեան մէջ չէ. նա պատահումէ ամէն ազգի զարգացման պատմութեան մէջ եւ, բնութեան օրէնքների համաձայն, ոչինչ բռնաւոր զօրութեան ձեռն չէ կարող կանգնեցնել այդ մշտական շարժողութիւնը, այլ միայն կարո՛ղ է նորան թուլացնել (paraliser), մարդկութեան զարգացման վնասի համար....

Այդ իրողութիւնից տեսանվումէ, որ Քրիստոնէական վարդապետութիւնը, որի նպատակն է արդարութեան եւ խղճմտանքի գաղափարները տարածանել մարդկութեան մէջ, հետեւապէս եւ ազնուագործել ամէն մի վարեցողութիւն մարդկային ընկերութեան մէջ, պիտո՛յ է որոնել ոչ միայն վերացականութեան, այլ եւ գործնական կեանքի մէջ:

Այդ դատողութիւնների կարգը բերումէ մեզ դէպ'ի այն կարեւոր եզրակացութիւնը, որ կրօն ուսուցանողները (քահանաները) պէտք է աշխատեն ժողովուրդի մէջ տարածել շատ գործնական գիտութիւններ՝ խիմիայ, Ֆիզիկայ, երկրագործութիւն, գինեգործութիւն, բժշկական եւ առողջապահական տեղեկութիւններ: Մաքուր բարոյականութիւնը, իմ խորին համոզումով, անշուշտ հետեւանք է զուտ-գործնական գիտութիւններ տարածելուն ազգի մէջ. որովհետեւ, կրօնուսոյցը տարածելով երկրագործական գիտութիւնը, նա ապահովեցնումէ, այդպէսով, տգէտ ժողովրդի նիւթական վիճակը, որանով եւ նուազումէ գողութիւնների եւ կողոպտութիւնների թիւը. ծանօթացնելով իւր ծուխն (приходъ, la paroisse) տնտեսականութեան հետ, ժողովուրդն աշխատումէ տնտեսաբար յարաբերուել դէպ'ի իւր ստացուածը եւ նորա գործածութիւնը. եւ այսպէսով, նա՛

ժողովուրդը, թէ և չափաւոր, բայց իւր հարազատ աշխատանքով է ապրում, առանց դիմելու դէպ'ի ուրիշ ստացուածի յափշտակութիւնը կամ աւազակութիւնը. ուսուցանելով „ժողովրդին առողջապահական կանոնները, վերջինս հեռանումէ զեղխ կեանք վարելուց: Քանի՞ արդեօք առոյգ երիտասարդներ, որոնք կամենումէին դեռ շա՛տ ապրել աշխարհիս վերայ՝ կեանք վայելելու համար, գլորուեցան անկանոն կեանք վարելուց:

Այդ բոլոր գիտութիւնները իսկ բարոյականութեան առանձին ճիւղեր են, որոնք գործադրուելով կեանքի մէջ, յառաջ են բերում մի առողջախոհ մարդ, որի մէջ, ըստ լաթինական առածին, բնակումէ առողջ հոգի. այն է՝ բարոյական մարդ, որը և կամենումէր Քրիստոնէութիւնը պատրաստել: Հոգևորականը մտանելով ժողովրդական ընտանիքի մէջ, քիչ անգամ չէ տեսանել այնտեղ ընտանեկան կապի զեղծումներ, իրաւունքների անհաւասար բաժանումն: Նա պիտո՛յ է լինի որպէս մեծ մարդագէտ (անդրոպոլ'ոգ) նոյնպէս և մեծ սոցիալ'ագէտ (հասարակական կեանքին հմուտ), որ կարողանա՛յ, յարմարուելով բնութեան ամէն մի զանազանութեան, քաղցրացնել ընտանեկան դառնութիւնները, բժշկական հմտութիւններով ոտքի վերայ կանգնեցնել այն, վերջին աստիճան խեղճ ընտանիքի հօրը կամ մօրը, որ մեռանելով, թողնելո՛ւ էր իւրեանից յետ մի խումբ փոքր մանուկների, որոնց ձեռներն անկարող էին դեռ իւրեանց՝ օրական հացը ճարելու. պի՛նդ կերպով ամրացուցանել այն ընտանեկան կապը, որ մօտ էր, 'ի հետևումն բազմատեսակ աշխարհային հանգամանքների, կործանուելու:

Ուրեմն, դորանից յետոյ, ես հաստատումեմ այն եզրակացութեան, որ կրօնից պէտքէ սպասել, ոչ թէ սանձողութիւն և ճնշումն մտքի, ինչպէս Հայ-կլ'երն է կարծում, այլ

մի կատարեալ ազատութիւն, ազատութիւն՝ խղճմտանքի մէջ, ազատութիւն՝ համոզումների մէջ, ազատութիւն՝ ընտեսական զարգացման մէջ, ազատութիւն՝ սոցիալական (ընկերական, հասարակական) կեանքի մէջ, որ հերքում՝ և բաց է առում մեկուսի և խորշող կեանքը, հակառակ կ՚երական կարծիքի, որ այն՝ ինչ որ, բնութեան անփոփոխ օրէնքով անհնարին էր իրագործել, իրագործուի.....:

Եթէ բոլոր մարդկութիւնը անհատ կեանքին սիրահար լինել ցանկանալով, փախչէր դէպ՚ի «վանորայք» (որովհետև մարդկութեան ամէն մի անդամը, ըստ մարդկային իրաւունքների հաւասարութեան, ունի իրաւունք մի և նոյն երանութիւնը ժառանգելու), հարցանում եմ. այլ ո՞րտեղ ևս կարող էր մարդկութիւնը ապրել ու չմեռանել քաղցից, զրկուելով, այդպէս, տնտեսական աշխատութիւնից. այլ ո՛րտեղ ևս կարող էին լինել հաստատուած տէրութիւնները, որոնք հսկումէն հպատակների ապահովութեան համար արտաքին անիրաւ կամ վայրենի զօրութիւնից:

Վերջապէս, եթէ այդ բնական ճանապարհով ընթերցողն սկսի մտածել, նա շատ ուրիշ ճշմարտութիւններ կգըտանի, որոնցից զուրկ են բոլորովին մեր հոգևորականների մեծ մասը և կհասկանայ, որ ժողովրդի բոլոր խեղճութիւնները գրեթէ հոգևորական տգիտութիւնից են յառաջանում. և պէտք է որ հասարակութիւնը կամ ժողովուրդը ուշադրութիւն դարձուցանի հոգևորականների անբաւականեցուցիչ դրութեան վերայ:

Մեր արդի բարոյագէտ կարծուածները զարմանում են, որ կրօնի զգացումները թուլացել են աշխարհականներից (տես 1872 թուի Նոյեմբերի Արարատի ծանուցման մէջ). սխալ կարծիք: Քրիստոնէութիւնն աւելի հաստատութիւն է ստանում, մտնելով դէպ՚ի գործնական կեանքը. ինձ համոզե-

լու համար, 'ի զուր պէտք է բերէին այստեղ մոլութեան օրինակներ իրական աշխարհից. տգէտ մարդը, որին նախապէս չէր տուած բանաւոր կրթութիւն, այդ դիպուածներում ևս (դժ մոլութիւններ անելու միջոցում ևս) սկսում է փորձով ծանօթանալ կեանքի անառակութիւնների հետ, որ, այդպէսով, նորանց թոյնը փայելելուց յետ, դառնար յետոյ գիտակցապէս Բարոյական: Գիտակցապէս—բառ, որի նշանակութեան վերայ շատ քիչ ուշադրութիւն է դարձուցել Հայի նահապետական կեանքը, իւր գոյութեան ժամանակից մինչ մեր օրերը: Խեղճ մարդին, որին այժմ տեսանումենք տգիտապէս անառակութեան մէջ ընկած, կապե՛լ էին հէնց չունեցող խրատներով վերացականութեան մէջ, ուսուցել էին այն՝ ինչ չկար իրական կեանքի մէջ և չէր կարող լինել՝ անբնականութեան պատճառով: Այժմ նա կամենում է ինքը գտանել (հասկանո՞ւմ էք, յարգելի բարոյագէտներ...) այդ արգելուած պտղի. դորանից յետ սկսվում է արդէն պատերազմ 'ի մէջ նորա վերացական կարծիքների և գործնական իրողութիւնների: Արկնումեմ դարձեալ, վերջիններս յաղթումեն միշտ, որովհետև, նորանց զօրութիւնը հիմնուած է բնականութեան, այսպէս ասել, անյաղթելի օրէնքների վերայ, որոնցը սահմանել է յաւիտենական Աստուածը մարդին երջանիկ կացուցանելու համար... Եւ այդ յաղթութիւնով, սուտ և վերացական բարոյականութիւնը դառնում է իսկական և գործնական բարոյականութիւն... Ես խորհուրդ եմ տալիս մինչև անգամ, որ կրքերով տանջուող մարդը, գնար, կարելի եղածին չափ, շուտ-շուտ դէպ 'ի դաշտերը, հովիտները՝ զբօսանք անելու. պարզ բնութիւնը իւր վճիտ և մաքուր օդը թափելով մեր թոքերի մէջ, խափէս մեղմացուցանում է մեր, վնասակար կերպով գրգռուած կրքերը և հրաւիրում է դէպ'ի չափաւորութիւնը: Ով, գեղեցիկ բնութիւն, դու, գիտակցական ճանապարհով շատ օգտա-

ւէտ բաներ ես ուսուցանում այն մարդին, որ սրտով քեզ ուսումնասիրումէր....

Ինչ թվումէ պարզուած այն խնդիրը, թէ ինչ բանի մէջ է քրիստոնէութեան նպատակը և ո՛րտեղ պէտք է որոնէինք նորա բազմակողմանի մշակութիւնը. ուստի, ես գալիս եմ դէպ'ի մի նոյնպէս խիստ հարկաւոր հարց—մանկավարժական հարցը:

1871 թուի Մայիսի [illegible] յօդուածի, Շխմախմուդ գիւղում ասած [illegible]—[illegible] անունով յօդուածի համեմատ այլ և 1872 թուի [illegible]—ի, [illegible]—ի, ևս և 1873 թուի Յուլիսի [illegible]—ի, [illegible] համեմատ:

Էջմիածնի կղերականութիւնը ոչ միայն հակառակ, այլ ընդհակառակն, օգտաւէտ համարելով դաստիարակութեան համար վանական դպրոցները, խորհուրդ է տալիս հայ մանուկներին դիմել դէպ'ի այդ առանձնացած տեղերը, որոնք, նորա կարծիքով, գտանվումեն [illegible] մարդերի բնակարաններ, այն է՝ վանքերի մօտ (!) վանքերի, որոնց մի միայն վերանորոգութիւնը (ПОЧИНКИ) նստէր հայ-ազգին տասնևհինգ հազարից մինչև քսան հազար ռուբլի: Շխմախմուդի կղ'երի կամ վարդապետի կարծիքով, արդի վարժապետները բոլորն ես [illegible] և անհաւատ (?!) են. ուստի պէտք է հեռի մնալ (!) նորանցից. իսկ էջմիածնական կղ'երի կարծիքով, երեխայքն պէտքէ դաստիարակել [illegible] (!) և տպաւորել նորա մէջ հնազանդութեան սկիզբները (sic!): Նոր երիտասարդ էջմիածնական կղ'երն ընդունումէ՝ որ ուսումը կենսական դրութիւն է, և որ տնային դաստիարակութեան ձեռը մեծ տպաւորութիւն ունի մանուկների ապագայ կեանքի վերայ այլ և, կշիռ է տալիս դաստիարակութեան



10601-57
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм.ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

մէջ օդի մաքրութեան, մանկական խաղերին, մանկական տուրւնի մաքրութեան և այլն: Կրօնական դ'արդացումը, նորա կարծիքով, յաւիտեան պիտի հիմնուի հեղինակութեան (աւտօրիտէի) վերայ և պիտի լինի միջնորդման. դէպ'ի աւելի հեռին գնալով, նա ասում է. որ «կրօնը որքան պարզ և կատարեալ ճշմարտութիւնների վերայ հիմնուի, այնքան աւելի քրիստոնէի պարտք է ներքին համոզմամբ ուսանել», անցուցանելով, մի և նոյն ժամանակ, մեքենայօրէն ուսուցանելու վընասի գաղափարը:

Յառաջ, քան կ'դպչէինք հայ-կղերականութեան կարծիքներին, ես միանգամ ևս կրկնելով թէ քրիստոնէութիւնը կայանում է գործնական կեանքի ապահովութեան և ազնւութեան մէջ, որոնց մարդս կհասանի միայն խիմիքական, երկրագործական, առողջապահական գիտութիւններն ուսանելու ճանապարհով,—հարկաւո՛ր եմ համարում նոյնպէս յիշեցնել նախ այստեղ այն մեծ մանկավարժական ճշմարտութիւնը, թէ մարդու նիւթական ապագայի լաւ կամ խորտաբեկ լինելը մեծ մասամբ կախուած է այն բանից, թէ նա իւր մանկական դաստիարակութիւնը ո՞րտեղ է ստացել,—անապատներո՞ւմ (ինչպէս քարոզում է մեր կղերը), թէ հասարակական կեանքի մէջ, և թէ ի՞նչ ուղղութիւն կամ ի՞նչ ձև է ունեցել այդ դաստիարակութիւնը:

Եւ այսպէս, աչքի առաջև ունենալով գործնական կեանքի ամենահարկաւոր նշանակութիւնը, որը տեսանք վերև, հարցանում ենք, դորանից յետ. կարո՞ղ է, արդեօք, փոքրիկ մանուկների սոցիալ'ական (հասարակական) կեանքը, իսկական կրօնի պահանջների համեմատ, ղեկավարուել անապատներում կամ վանքերում, հեռի՛ այն հասարակութիւնից, որի համար նորանք պէտք է պատրաստուեն: Չնայելով հարցի, ըստ մեզ, ամենապարզութեան վերայ, պատասխանում ենք. ոչ: Արթուև-

լով հասարակութիւնից դուրս, որի համար նա պատրաստվում, նմա անծանօթ են մնում կեանքի նեղութիւնները, այն ինչ, նա նորանց քա՛ջ պիտի ուսանէր, որ կարողանար, նորանց յաղթելով, հասանել նիւթական բարեկեցութեան, որ է՝ ֆիզիքական առողջակազմութիւն, հետևապէս, և բարոյականութիւն, որ կայանում, ինչպէս տեսանք վերև, վերջինիս (առողջ մարմնակազմութեան) մէջ: Այն՝ դէպ՛ի որը, խոր ուսումնական ճանապարհով, անկարող է լինում բերելու մեզ ուղղահամոզողականն՝ կամ որ նոյն է՝ խրատաբանական կրթութիւնը, որ թագաւորում ամէն, դեռ չկրթուած ազգերի մէջ...

Դատողութիւնների այդ կարգից հեշտ է եզրակացուցանել որ վանական կրթութիւնը անօգուտ է և իսկական տեղերը կրթութեան գլխաւորապէս են ուսումնարանները հասարակութիւնների մէջ, որոնց համար ուրածին մարդը հարկաւորապէս ապագայ անդամ է պատրաստվում......

Կեանքն այն ժամանակ կզարգանայ, ժողովրդի տնտեսական ցաւերն այն ժամանա՛կ կը ողջանան, երբ թոյլ կտանք բանաւոր մարդին իր բանականութիւնը գործադրելու ազատութիւնով, չկաշկանդելով այդպէս մնալ անշարժ իր նախկին դրութեան մէջ. և ուրեմն, ի՛նչ բանի համար է շնչել ազատ Աստուածը մարդկս մէջ ազատ մտածողութեան ընդունակութիւնը, մինչդեռ պիտո՛յ է սա փտէր անգործութեան մէջ, բանտարկուած լինելով աւանդների և սովորութիւնների մէջ?

Ալ՛երն անցած 1872 թուի Յուլիսում ասում, որ կրօնը ներքին համոզմամբ պիտի ուսանել. բայց, արդեօք, նա առնո՞ւմ կշռադատութեան մէջ, որ նորա բոլոր ուղղութիւնը, և բոլոր մտքերն, առհասարակ, խեղդումեն այդ ներքին համոզման, կաշկանդումեն նորանք ազատ միտքը զօրեղ նախապաշարումների շղթաներով: Ըմբռնո՞ւմ նա արդեօք, գի-

տակցապէս, որ ինքն անկարող լինելով բոլորովին կանգնեցնել, թուլացնում՝ անդամալոյծ է կացուցանում անտեսական և պատմական փիլ'իսոփայութեան ազատ գնացքը, մարդկութեան զարգացման վնասի համար?.....

Շախմախմուեթի կլ'երը արդի հայ-երիտասարդութեան կախարդներ անուանելով (տ. 1871 թուի Յունիսի մէջ), դըրդում է ժողովրդին հեռի մնալ նորանցից։

Ես եզրակացնումեմ այդտեղից, որ քարոզող կլ'երը դեռ չունի ծանօթութիւն Ամերիկայի և Եւրոպայի մանկավարժական կեանքի հետ, որին յատկապէս պարտական են նորանք իւրեանց բարձր քաղաքակնութիւնով, անտեսական յառաջգնացութիւնով և բարոյական փիլ'իսոփայութիւնով. ուրիշների թվում, ես յիշումեմ այստեղ Հիւսիսային Միացած Շտատները, Անգլ'իան, Ֆրանսիան, Պրուսիան...... Այդ բոլոր տեղերի մէջ, մանկավարժական կենսականութիւնը, շատերի արձագանգով, արտափայլում է երիտասարդութեան մէջ, երիտասարդութեան, որի ամենամեծ խնդիրն է՝ համողել, բնական պատճառներով, փոքր մարդերին (երեխաներին) այս կամ այն ճշմարտութեան մէջ, և այդպէս պատրաստել ազգի համար մտածող անձներ, որոնք ոչինչ չընդունէին, եթէ յառաջ չհամոզուէին այս կամ այն բանի մէջ (տ. Учитель, Журналъ за 1866 г. պ. Ռոզանովի *Обученіе и воспитаніе* անունով երկայն յօդուածը, այլ և, Самодѣятельность, պ. Կուտէյնիկովի ռուս-թարգմանութեան մէջ)։ Վերև յիշած մի քանի թերթե մանկավարժական յօդուածներից տեսանվում է, որ մի՝ երկու նոր երիտասարդների մուտքը Էջմիածնի հոգևոր եղբայրութեան շրջանի մէջ բոլորովին անհետ չանցաւ. նա, շատ թէ քիչ, օգտաւէտ եղաւ նորա համար, գործնական ծանօթութեան մասով։ Արարատը, ինչպէս երևում է նորա, զանազան տեղերից ուսումնարանական յօդուածներ ընդունելուց, հաշտ է ու-

սումնարանների բացման հետ. և որովհետև, համաձայն Տէրութեան տնօրէնութեան, Հայ ուսումնարաններ բանալու իշխանութիւնը, հետևապէս և, ուսումնարանների՝ ֆինանսական մասը (արծաթը) գտանվում է հոգևոր կառավարութեան ձեռում,—Արարատը, ըստ երևոյթին, աշխատում է ցոյց տալ Հայ-ժողովրդին, որ ինչպէս եւ հանդիսանում այժմեան լուսաւոր մըտքերի առաջնորդն Հայ ազգի մէջ, և միևնոյն ժամանակի ընդունակ է առաջնորդ լինելու հայերին լուսաւորութեան գործի մէջ........

Սակայն այստեղ ուշադրութեան արժանի է այն հանգամանքը. որ ուսումնարանների վերայ գրած համարի՛ը բոլոր յօդուածները «Արարատի» մէջ բռնումեն վերջին տեղը...

Գտա՛նք դէպ՛ի մի այլ կարևոր կէտ—լեզուի խնդիրը:

1871 Թուի Յունիսի «Յովհաննէս Մարգարէ» անունով գրաբար ոտանաւորից և Հայ-կաթող՛իկոսի օծման տարեդարձի համար գրած չորս գրաբար ճառախօսական փառաբանութիւններից և Յուլիսի, (35 երեսից բաղկացած) առաջնորդող գրաբար յօդուածից, Օգոստոսի «Ի ծով կենցաղոյս» անունով չափաբերութիւնից, Նոյեմբերի «Պաշտաման տօ նուաճնելոյ էակն էիցըս համայնից» վերնագրով խրթին գրաբար ոտանաւորից և այլ, սոյն և հետևած 1872 և 1873 Ամսատետրերի մէջ տպած շատ գրաբար խրթնաբանութիւններից, երևում է, որ հոգևորականութիւնը նայում է լեզուի վերայ ոչ ինչպէս միջոցի, այլ ինչպէս նպատակի վերայ (?!!)

Սխա՛լ տեսութիւն:

Պարզենք մեր միտքը: Սկզբնական մարդերը, զանազան կարիքներից ստիպուել են, միմեանց բացատրելու համար

այդ կարիքները, սանդծել նշանաւոր հնչիւններ՝ բառեր, որ, գալով՝ գալով հասել են այն կատարելութեան, որը մենք տեսանումենք հիմայ չեղած անունով. Որքան, Կատրմեր, որքան յիշումեմ, այդ միտքն աւելի են ընդարձակած իրեանց նշանաւոր հեղինակութիւնների մէջ:

Եւ, ինչպէս մեր, նոյնպէս և միւս ամէն ժամանակի մէջ, եթէ լեզուն այդ պաշտօնը չկատարէր, բոլոր մարդկութիւնը կլինէր համր (լալիկ). և այն ժամանակ, մնացէ՛ք բարով, ո՛վ մտքերի փոխանակութիւններ, ո՜վ զգացումների ոգևորող արտայայտութիւն, ո՜վ կեանք, մի խօսքով, ասելու էինք, վերջապէս, որ անհնարին է:

Լեզուի այդ նշանակութիւնից պարզ երևումէ, որ մենք՝ հայերս էլ, լինելով ենթարկուած բնութեան զարգացման օրէնքներին, միւս ազգերի պէս, ամենից յառաջ, պէտք է աշխատենք մեր նոր, ժողովրդի լեզուն (աշխարհաբարը) մշակել և ընդհանուրի սեփականութիւն դարձուցանել. այնպէս, որ այդ լեզուն ընդունակ լինէր հողագործական, տնտեսական, ևայլն, ևայլն..... գիտութիւնները տարածել հասարակութեան, այն է՝ քաղաքների և գիւղացի եղբայրների մէջ, մանաւանդ, որոնք, իրեանց հազար ու մի տնտեսական ցաւերի զօրութիւնով, ունին իրաւունք կեանքին պահանջելու ամենից բարբարոս մարդից անգամ....

Այդպէս, ուրեմն, առաջին տեղը տալով (չենք էլ կարող չտալ) նորածին աշխարհաբարին, երկրորդ տեղը բռնումէ հին և ծերած գրաբարը. հին եմ ասում, որովհետև, նորա հասարակաց գործածութիւնը վերաբերումէ հին ժամանակին և է, ըստ ամենայնի, հնութեան սեփականութիւն. մեռած,— որովհետև, նա կատարել է իւր դերը իւր ժամանակում, և հիմայ չէ կարող ընդհանրութեան (բոլոր ազգի) գործածու-

թեան առարկայ դառնալ, 'ի տես այն յաղթութեան, որը, նոր լեզուն, պատմական իրողութիւնների զօրութիւնով ձեռք է բերել... Այդ երևոյթը միայն մեր ազգի մէջ չենք նշմարում. ո՞վ չէ իմանում, որ այլ ևս չեն երևում այս XIX-դ դարի մէջ, հին՝ սլաւոնական, լաթինական, գալլական, գերմանական լեզուների հետքերն անգամ. այլ, ընդհակառակն, ընդարձակ գործնական կեանքի մէջ մեծ դերը յատկապէս կատարումեն նոր ռուս գրականական, նոր իտալական, նոր Ֆրանսիական, նո՛ր նեմեցական լեզուները...

Եւ այդպէս, լեզուն, կրկնում եմ, է լոկ միջոց գիտութիւններ տարածելու ծաղկեցնելու մէջ, բայց նա ինքն գիտութիւն չէ, և գրաբարը կարող է մեզ համար իսկ և իսկ այն նշանակութիւնն ունենալ, ինչ նշանակութիւն կարող է ունենալ հին՝ կլասիքական (սլաւոնական, լաթինական...) լեզուների ուսումնասիրութիւնը: Գրաբարը կարող են, ինչ եմ ասում, պարտաւոր են ուսումնասիրել միայն մասնաւոր անհատներ, եթէ նորանցը հետաքրքրում է հայի հնութեան ուսումնասիրութիւնը:

Ես կամենում եմ դիպչել նոյնպէս մի խիստ պակասութեան,—դա՛ է կլերի նեղ հայեացքը թէատրի վերայ:

1872 թուի Սեպտեմբերի «Սանասար և Բաղդասարի վրէժխնդիրը» անունով գրաբար թատերական ոտանաւորը և նորա շարունակութիւնները միւս հետևորդ ամիսներում, տալիս են մեզ իմանալու, որ թէատրի վերայ կլերն առ հասարակ խիստ նեղ ու սահմանափակ հայեացք ունի. ուստի և նա, որ մինչ հիմայ իսպառ մոռացել էր, ինչպէս երևում է, նորանց գոյութեան մասին, 1872 թւում սկսում է հրատարակել իւր թերթերի մէջ անկատար տրագիքական (ողբերգական) փորձեր, գրաբար լեզուով....

Ըստ երևոյթին, կլերը չէ իմանում թէատրի նշանա-

կութիւնը, որ է՝ համոզել ռամիկ ամբոխին, որ նորա այս կամ այն ընթացքը կարող է այս կամ այն վնասները կամ օգուտներն ունենալ, ցուցանել այս կամ այն սովորութեան անտեղիութիւնը, նախապաշարումների վնասակարութիւնը, ոգևորել ժողովրդին իւր պատմական անցածով, և այդպէսով բարձրացնել և ազնուացուցանել հասարակական կեանքի բընաւորութիւնը, որանով և տալ նմա կանոնաւոր ուղղութիւն անտեսական ճանապարհի վերայ......

Այդ որոշումից ինքն — ըստ-ինքեան երևում է, որ թատերական գրուածների լեզուն շատ պարզ և հասկանալի պէտք է լինի ա՛յն հասարակութեան, որի համար նշանակուած են այդ գրուածները. հետևապէս, սաստիկ պարզամտութիւն կլինէր, եթէ մին հիմիկուան հայ-ամբոխի համար մտածէր գրաբար լեզուով թատերական աշխատութիւններ գրել, որ բոլորովին անմատչելի է նմա.....

Այո՛, կրկնում եմ: թէատրը վերին կրթողական նշանակութիւն ունի հասարակ ամբոխի և միջնակարգ մարդկերի համար. նորա գրողը պէտք է քա՛ջ ծանօթ լինի, նախ և յառաջ, իւր առարկայի (նիւթի) ամէն կողմերի հետ և ունենայ բաւական մեծ հմտութիւն և վերին էսթէտիքական ճաշակ, իւր նպատակին հասնելու:

Եթէ մարդիս համոզումներն ազնիւ են, նորա գործերն ևս, առ հասարակ, պէտք է ազնիւ լինեն. որովհետև, գործը, խիստ տրամաբանական կերպով խօսելով, արտայայտութիւն է համոզումների. իսկ եթէ անազնիւ, — գործերն ևս նոյնպէս: Սորա պէս ևս տգիտութիւնը տալիս է իւր պտուղը գործնական կեանքի սովորական ընթացքի մէջ:

Մատնացոյց լինելով դէպի այդ կէտը, յառա՛ջ տանենք մեր խօսքը:

1872 թուի Մեղուի 13-դ, 29-դ, այլ և 1873 թուի 19-դ, 21-դ, 22-դ, 27-դ, 28-դ, 29-դ, 32-դ, 36-դ 37-դ, ևայլն №-ներից պարզ երևում է։ 1) Այնպիսի է եղել իւրերի ընթացքը, որ հայ հոգևորականը տառն և իւր հայրեար տաբոս մէջ Ռուսաստանից չէր, դեռ չէ կարողացել հասկանալ Ռուսաստանեան խոհական ոգին, որ այնքան արդիւնաբեր արեց Եւրոպական հողը, և նա այդ բառով սուտ թէ հասկանում թևաւոր հրեշտակներ, որոնք թշնամիներ են պղերաւոր սատանաների հետ (?!!)... Իսկ այդ փակոից (և միայն ա՛յդ փակոից) պարզ երևում է նորա տգիտութիւնը գիտութիւնների, մանաւանդ, բնագիտութեան մէջ, որ, ինչպէս յայտնի է, մեծ կապ ունի Ռուսաստանեան ուսումնարանների հետ, և տգիտութիւնը հայկական պատմութեան մէջ, ա՛յն աստիճան, որ սպարապետ Վարդանին հայկական թագաւոր է ընդունում, իսկ Ամերիկային քաղաք...Տխո՛ւր երևոյթ, սրտամա՛շ ճշմարտութիւն, այնքան աւելի, որ իշխանութիւնը և պրոֆեսորութիւնները գտանվումեն մանաւանդ հոգևորականութեան ձեռքում. 2) Որ նորանք զուրկ չեն սաստիկ նախապաշարումներից (1872 թ. № 29) և ծայրահեղ մոլութիւններից (1873 թ. Մեղուի № 29 և Մշակի 17 №), և վերջապէս որ նորանց յարաբերութիւնը դէպ՛ի ժողովուրդը մաքուր և խղճմտանքի համաձայն չէ.....Վա՛նդ տանենք այս կէտի վերայ մի փոքր։

Ի՞նչ է անում քահանան. մեռածի գիակը շուտ է տալիս, մեռածների թիւը դորանով, երբ շատացնելու գիտաւորութիւնով (1872 թ. 29 №), պսակողներին, մինչ պսակի խորհուրդը կատարվումէր նորանց վերայ, դուրս է անում եկեղ՛եցու մէջից, նորանց պատրաստ փող չունենալու պատճառով (1873 թ. 27 №), պսակուել ցանկացողներին պսակման արգելք է լինում (նոյն թուի 19 №), ժողովրդի նոր

շրերի թէ գոյնը, թէ արժեքը գրուած, որ կողոպուտի ժամանակ չթագուցանէին իւրեանից (նոյն թ. № 21), մարդերին խաբուած, խաբեբայ ճանապարհներով փող խլելով ժողովրդից, և թշնամութիւն է սնուցանում դէպ'ի յարաբերութիւնը օտար ազգի հետ (նոյն թ. 22-դ №), հարս է բռնաբարում (նոյն թ. 28 №), նորա տիրացուները քեֆեր են անում, նոյն իսկ եկեղեցու մէջ (29 №), արգելք է լինում հայ երիտասարդներին՝ ուսումն տալու հայերին (№ 32), անկարգութիւն է համարում օրիորդների երգեցողութիւնը եկեղեցու մէջ (№ 32-դ), և այլ շա՛տ ու շատ բաներ, որոնցը մենք անտեղի համարեցինք բերել այստեղ:

Բայց ի՞նչ պէտք է անի, հարցանում եմ, հոգևորականը:

Թէ ի՛նչ պէտք է անի քահանան, կարծումենք, բաւական պարզուեցաւ մեր դատողութիւնների կարգի մէջ ըստ ամ. բայց թէ ի՛նչպէս կարողանանք գիտնական հոգևորականներ ձեռք բերել, ես խնդրելով իմ ընթերցողին դառնալ դէպ'ի իմ նկատողութիւնը Ներսիսեան դպրոցի վերայ, յաւելացնում եմ այստեղ:

Յայտնի է, որ հայերի այժմեան կաթողիկոսը, Գէորգ Զորրորդը, ընդհանուր ազգից փողեր հաւաքեց և այդ փողերով կառուցեց, ինչպէս ասումեն, այս վերջին տարիներում, մի ընդարձակ և հոյակապ շինութիւն Էջմիածնում, ուսումնարանի համար: Ասել է թէ, դաստիարակութեան արտաքին չորը (ֆորմալիզմը) վերջացած է, և պէտք է սպասել հիմայ նոյեմբերից այնտեղ գիտութիւններ, որոնք ընդարձակապէս պիտի մատակարարուեն այնտեղ: Եւ մենք, ուրիշների թըվում, կսպասենք այն րոպէին, երբ պատմութեան անաչառ դատաստանի առաջև կդրացուի քննութիւնը այն բանի, թէ մեր կաթողիկոսի գործունէութիւնը ո՞ր չափով խորհրդաւոր է եղել հայ ազգի համար:

Ներսէսը հրաւիրեց իւր ուսումնարանի մէջ պրոֆէսոր Ղահան Չուբառեանին իւր անունն անմահացնելու, տեսանենք երբ կհրաւիրուեն նոր Ակադեմիայի մէջ. (ինչպէս անուանումեն նորոգ էջմիածնական դպրոցը) նշանաւոր պրոֆէսորներ Եւրոպայից և արժանաւոր երիտասարդներ Հայաստանից, նոր կաթողիկոսի անունը փառաւորելու անմահութեան մէջ......

## Ներսէսը Հարևանցի համեմատութեան մէջ Մխիթարի հետ [1])

Ուշի ուշով ականջ դնելով այդ երկու անձների վարքագրական ծրագրին կամ համառօտութեան [2]), երկուսն ևս յայտնվումեն իսկական հերոսներ ազգային գործակատարութեան մէջ, չնայելով այն կարի էական տարբերութեան վերայ, որի մէջ գտանվումեն նորանք:

Նայումեմ Ներսէսի վերայ, ինչպէս քաղաքական անձի և ազգին անձնատուր մարդի վերայ. նորա վերադարձը Սուլթանի այցելութիւնից, դէպի որը ուղարկուած էր նա, դեռ եպիսկոպոսութեան մէջ, կաթողիկոսական յանձնարարութիւնով, նորա, կարճ միջոցներում փոխուելը մի աստիճանից դէպի ա-

1) Նկատ. Չնայելով այս համեմատութեան միակողմանի ուղղութեան, որ յառաջացել է աղբիւրներ չունենալուց եւ նիւթական անապահովութիւնից, մենք դարձեալ աւելորդ չհամարեցինք նորա հրատարակութիւնը, միտ դնելով որ վերջինս բոլորովին անօգուտ անցանելու չէ մեր կենսագիրների համար:

2) Ներսէսի եւ Մխիթարի կենսագրութիւնը ըստ Նազարեանի աշխատութեան. Обозрѣніе исторіи Гайканской письменности, որի վերայ յատկապէս հիմնուած է մեր համեմատութիւնը, — 'ի բաց է ձգուած, սաստիկ նիւթական պակասութեան պատճառով: Զարմանալի բան. հայերը, չընայելով իւրեանց փայլուն ընդունակութեան վերայ, դեռ չեն տեսանում թէ պատմութեան ձեռքը ինչ ահաւոր հետքեր է թողուցել նորանց կեանքի վերայ, մեծ մասնով այն առանձնականութեան շնորհով, որ 'ի հետեւումն հանգամանքների օտարոտի կուտակման, ապրումէ մեր մէջ եւ մինչ այսօր.......

ւելի բարձր աստիճանը (եթէ չբացատրենք նորա ազնուատոհմութիւնով, այնքան ևս աւելի, որ նորա երիտասարդութիւնը կարօտ ենք տեսանում ուրիշ խնամածութեան), նորա ատէպ-ատէպ հաղորդակցութիւնը այն պատերազմներում, որոնք տեղի էին ունենում այդ երկու ահագին զօրութիւնների—Ռուսիայի և Թիւրքիայի մէջ, վերջապէս, նորա, կաթողիկոսական գործերի կառավարութիւնը, վերջինիս բացակայութեան միջոցում Էջմիածնից—ցուցանումեն նորա սէրը, այո՛ և հմտութիւնը, պոլիտիքայի կամ քաղաքականութեան մէջ։

Ներսիսեան դպրոցի [1]) նշանաւոր կառուցումը և շատ

1) Մեր մէջ, հայերի մտաւոր փրկութեան ամենագլխաւոր միջոցը վաղուց արդէն տեսանվումէ հայ ուսումնարաններ բաց անելու մէջ, թէ և դեռ Թիֆլիսը չունի գէթ տասը նորանցից։ Ուղիղ, ուսումնարանի կոչումը ցուցանումէ այդ մտքի տառական ճշդութիւնը։ Իսկ հոգևոր ուսումնարանի (սէմինէրի) կոչումը մեզ աւելի խորհրդաւոր է երևում, գիտնական հոգևորականներ պատրաստելու մտքով, որի մէջ կայանումէ և նորա մասնական (սպեցիալական) կոչումը։

Այդ այդպէս. բայց դնենք, թէ (?!) Թիֆլիս մարդաշատ քաղաքը ունի 50 հատ հայ-ծխական վարժարան, որանով կարող էր նա պարծենալ. սակայն կարող է այդ պարծանքը սուտ և արատաւորող չասուիլ, երբ այդ յիսուն ուսումնարանի ուսուցիչները յիսուն անապատական մղդսիններ էին, որոնք ոչինչ հասկացողութիւն չունէին իւրեանց պարտականութիւնների վերայ դէպի Տէրութիւնը, կրօնը և ոչ ժամանակակից մարդկութեան զարգացման հոգու վերայ։ Օրինակը գեղեցիկ է լոկ խօսքից. Իսպանեան բարձր է Անգլիայից իւր համալսարանների թվով, բայց ստոր նորանից իւր մտաւոր զարգացմամբ, այն է վաճառականական, տնտեսական յառաջադիմութիւնով, և այլն։

Այստեղից երևումէ, որ պարծանքը պիտի որոնել ոչ այնքան ուսումնարանների քանակութեան (շատութեան), որքան նորանց յատկութեան մէջ։ Այս խօսքերից յետոյ դառնանք դէպի Ներսիսեան դպրոցը, որ մինչև հիմայ գրեթէ միակ լոյսն է համարուել բոլոր ազգի համար, գիտնական առաջնորդներ պատրաստելու մտքով։

Մեր, ներկայ 1874 թուի Յունուարի 24-ին, 16-դ համարով տուած խնդրի համաձայն, նորա հոգաբարձութիւնը տալով մեզ հին ընդհանուր կանոնադրութիւնը, մերժեց մեզանից այդ ուսումնարանի նոր պրոգրամը, յառաջ բերելով, որ նա՝ պրոգրամը, կարգաւորութեան մէջ բերուած չլինելով, պարունակվումէ ժուրնալների մէջ, որ դժուարութիւն է ներկայացնում տալու։

արժանաւոր մարդերի, որոնց Թվում է պրոֆեսոր Շահան.

---

Ուրեմն, հաստատենք հիմայ մեր Թիկունքը մեր ձեռքում գտանուող դոկումենտի վերայ:

Մեր առաջեւ գտանվումէ Թիֆլիզի ազգային հոգեւոր Դպրոցի ընդհանուր կանոնադրուԹիւնը, հիմնած հայկական կաԹոլիկոսի տէր ՄատԹէոսի կնդակի վերայ, հրատարակած 1861 Թ. Յունիսի 9-ին, 327 համարով:

Նորա 16-դ յօդուածի առաջին մասնի 3-դ պունկտի զօրուԹիւնով, Դպրոցը պէտքէ ունենայ բնական գիտուԹիւնների հանդիսարան, բայց ինչ-պէս յայտնի է, չունի:

Նոյն կան. 35-դ յօդուածի համեմատ, Դպրոցը պէտքէ ունենայ վեց դասատուն, բացի նախապատրաստականը,—բայց, ունի, ինչպէս յայտնի է, հինգը:

36 յօդ. Ուսման առարկաները եւ լեզուները, միւսների Թվում, պիտի լինի գրականուԹեան պատմուԹիւն, բայց չկայ. հոգաբարձուններից մին ասնցած 1873 Թվի հարցաքննուԹեան մէջ ինձ ասաց, որ այդ գրականուԹեան չքացնողը եղել է մի Հոգեւոր Անձն. մեզ ցանկալի կլինէր իմանալ գրականապէս, պատճառը: Լատին լեզու, բայց չկայ: Ազգային պատմուԹիւն, բայց չկայ: Հայաստանի եւ Ռուսաստանի աշխարհագրուԹիւն, սպեցիալական մըտքով, բայց չկայ: Առողջ բժշկականուԹիւն, բայց չկայ: Այդ բոլորը մենք ասումենք չկայ,—հիմնուելով ընդհանուր հարցաքննուԹիւնների վերայ, 1871, 1872, 1873 Թվերում:

41. յօդ. Աշակերտների ընդհանուր տարեկան հարցաքննուԹիւններէ մասին, որ լինումէ մի անգամ տարու մեջ, նախընԹացաբար պիտի ծանուցանուի 'ի լուր ամենեցուն եւ առանձին յայտարարուԹիւնով, որ նոյնպէս պիտի պարունակի իւր մէջ առարկաների քննուԹեան եւ կարգի սահմանադրուԹիւնը, հաստատած Դպրոցի հոգաբարձուԹիւնից: Մեզ յայանի չէ ոչինչ սահմանադրուԹիւն, որ տպած լինէր որ եւ է շաբաԹաԹերԹի մէջ. մեզ միայն յայտնի է այն որ հարցաքննուԹեան մէջ ներկայ գտանուող մի քանի պարոններ, տեսանելով աշակերտների մեքենայօրէն պատասխանատվուԹիւնը, կամեցել են հարցաքննել միջնորդաբար կամ անմիջապէս, ինչպէս կհաճէր Դպրոցը, բայց նա չէ Թոյլատրել: Մեր միտն է, ինչպէս էր կոխ բացուել այդ առիԹով, անցած (կարծեմ 1866 եւ 1867 ԹԹ.) տարիների հարցաքննուԹեան մէջ, «Հայկական աշխարհի» երբեմն խմբագրի եւ այժմ Խորէն վարդապետի հետ. մենք եւս նոյն վիճակների հանդիպեցանք 1871, 72 Թվերում: Իսկ 1873 Թվում, երբ տեսան որ ապացուցի Դպրոցի մեքենայականուԹիւնը ըստ հայկական լեզուի (որը խոստովանեց եւ «Մշակ»), մեզ այլ եւս չԹոյլատրեցին ներկայանալ հարցաքննուԹեան, դպրոցի պահապանի (сторожъ-ի) ձեռքով....Արդեօք, չպետքէ սորանից եզրակացնել, որ Դպրոցը մասնաւոր անձների կամքի խաղալիկ է դարձել:

63-դ յօդ. երկրորդ մասի 6-դ պունկտի զօրուԹիւնով, Դպրոցը պէտք է ունենայ գիւղական տնտեսուԹեան դաստակերտ, բայց ինչպէս յայտնի է, չու-

Ջրպետեանի, [2]) Հրաւէրն օտար երկրներից դէպի այն ժամանակ նորակառոյց ուսումնարանը, աղաղակումն, խուռեանց կարգով, բարձրաձայն, որ ՙՆերսէսն անցուցել՚ է իւր արքեպիսկոպոսութիւնը Թիֆլիսի մէջ. ո՛չ թէ անխորհուրդ ծուլութեան մէջ, յատուկ միայն հոգով մեռած հովուերին, այլ մի եռանդնոտ և գործունեայ հայրենասիրութեան մէջ, որ միա՛յն թոյլ՚ատրում է բանաւոր արարածին մարդ անուանել աշ-

---

նի: Նոյն յօղուածի առաջին մասի 3-դ պունկտի և երկրորդ մասի 2-դ պունկտի զօրութիւնով, որդեգիրներից 30-ը կամ աւելին պահպանվումէն ուսումնարանի հաշւով. բայց ինչպէս լսումենք, այժմ բոլոր որդեգիրների թիւը է միայն 25:—

Այդ բոլորը չկայ....... չկայ........ չկայ......... ինչի՞ ուսումնարանը փող չունի, արդեօք:

Ի՞նչպէս իմանայ ազգը, արդարեւ, ուսումնարանը, փող չունի. տալի՛ս է արդեօք ուսումնարանը հաշիւ ըստ ելքի եւ մուտքի, իւրաքանչիւր տարի ազգին, գազէթների միջոցով կամ առանձին տետրակներով, ո՛չ. ինչի:

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Ցոյց տուեցէք ազգին մանրամասն տարեկան հաշիւներ, ապա թէ ոչ, իրաւունք ունինք աղաղակել, որ դու, ուսումնարանի՛ կառավարութիւն, անարդար ես դէպի ազգը, որովհետև զրկումես նորան ճիշտ հաշուետւութիւնից, հաւատացնելով նորան լոկ խօսքերով թէ այդ մեծ ուսումնարանի մէջ եւ մեծ կանոնաւորութիւնով է յառաջ գնում ամէն բան.....

2) Շահան Ջրպետեան, ժամանակակից Սէն-Մարտենի, ապրումէր Փարիզում, ինքն հայ-կաթոլիկ, պրոֆէսոր ասիագիտական ուսումնարանում: Այս հայագէտների միասնական աշխատութիւններին ենք պարտական մենք հեղինակութիւնս. Recherches curieuses sur l'histoire ancienne de l'Asie par J. M. Chahan de Girbied et S. Martin. Paris, 1806: Շահանը հեղինակ է նոյնպէս այս աշխատութիւնների. Mémoire sur le gouvernement et la réligion des anciens Armèniens Paris, 1810 եւ Mémoires de Jean Woskerdjean. Վերջինիս հրատարակութիւնը յառաջ բերեց զօրեղ վէճ Ջրպետեանի եւ Յարութիւն Վաղարշապատցու մէջ, որ այն ժամանակ գտանվումէր Փարիզում. մեղադրումէր առաջինին այն բանի մէջ, իրր թէ նա իւրացուցել է ինքեան օտար գրականական աշխատութիւնը եւ դէպի չարն է գործ ածել այն վարկը, որանով Յարութիւնը հաղորդեց նմա Ոսկերչեանի արժանայիշատակութիւնների ձեռագիրը: (երկու հակառակորդների մեղադրութիւնները եւ ընդդիմաբանութիւնները գտանվումեն Annales politiques et literairesում An 1818, №№ 943, 955. Gazette de France Jeudi, 9 Juillet 1818 № 190,

խարհիս մէջ, բառիս խակական նշանակութիւնով.... Ներսէսի միւս կենսագրական էպիզոդներից նոյնպէս երևում է, որ նորա արքեպիսկոպոսութիւնը Թիֆլիսի մէջ չէ աշխատել զրկելու հայ-ուսումնաւոր երիտասարդներին պաշտօնատարութիւնից: Արկնումեմ, Ներսիսեան դպրոցի մեծակառոյց շէնութիւնը և Լազարեան ճեմարանի արժանաւոր երիտասարդներին իրողապէս պատուելը, պարզ կերպով ապացուցանումեն, որ Ներսէսը, երբ արքեպիսկոպոսութեան ժամանակ Թիֆլիսում չէր խաւարապաշտ և հայ ազգին խորթ մարդ. նա բարեկա՛մ էր ռուսական լուսաւորութեան և այդ բարեկամութիւնը յայտնագործվումէր նորա գործերի մէջ......

Պատմութիւնն ունի իրաւունք խիստ կերպով դատապարտելու այդ տեսակ անձներին, եթէ նորանք, փոխանակ հայրենասէր լինելու, են ազգային դաւաճան. փոխանակ գործ կատարելու, փտո՛ւմեն անգործունէութեան մէջ.... ինչի՞, որովհետև, նորանք ունին (կամ՝ գէթ կարո՛ղ են ունենալ) գումար (կապիտալ), առանց ունենալու միւս նիւթա—կենսական նեղութիւններ, և 2) իշխանութիւն, ըստ պաշտօնի մեծ գործեր կատարելու մեր ազգի մէջ: Նա ունի՝ նոյն չափով իրաւունք և դափնեայ պսակ դնելու այդ տեսակ անձների գլուխների վերայ, եթէ, ունենալով վերև ընդգծված շահաւէտ յատկութիւնները, նորանք չէ՞ին դէպի չարը գործ դրել այդ կերպով, իւրեանց իշխանութիւնը և դրամական կարողութիւնը:

Բայց ահա մի ուրիշ մեծ և արժանաւոր անձն, որ կամեցել է, դեռ Ներսէսից յառաջ, հետևապէս և աւելի բարբարոս ագիտութեան ժամանակ, գործ կատարել ազգային լուսաւորութեան նկատմամբ. այդ անձն — է Մխիթար:

Մխիթար արժանի է կարեկցութեան՝ Պատմութեան առաջև. լինելով վերին աստիճան խեղճութեան մէջ, անտո՛ւն՝ անտէր Մխիթարը հալածվում է լուսաւորութեան հերոս թշնամու — հայ-հոգևորականների տգիտութեան ձեռով, Էջմիածնից դէպի Պոլիս, Պոլ՛սից դէպի Էջմիածին, Էջմիածնից դարձեալ դէպի Պոլիս, այստեղից դէպի Մոդէն, Մոդէնից դէպի Վենեցիայ..... և ինչի՞ համար. իրագործելու իւր ուխտաւոր ցանկութիւնը, որը յայտնեց իւր նամակներից մինի մէջ. «Թող հաճի՛ Երկնքի կամքը տալու ինձ միջոցներ՝ հիմնելու մի մշտական միաբանութիւն, որի նպատակը լինէր տարածանել Հայերի մէջ տեղեկութիւններ, որոնք կարևոր են նորանց զգնուացուցանելու համար, բարոյական և հոգեկան կողմից»: Այո՛, խեղճութիւնը և հոգևորական հալածանքը, չտալով ցաւելի Մխիթարին ոչինչ սխտեմատիքական կրթութիւն, որ կարո՛ղ լինէր նորան հաստատուն պո՛լիտիքական հողի վերայ կանգնեցնել, նա ցանկանում է, միաբանութիւն կազմելու ձեռով, ազնուացուցանել անգութ հալածողութեան բնաւորութիւն, որին ենթակայ էր նորա ազնիւ սիրտը. և ահա՛, բազմամեայ հալածանքներից յետ, նոյն հա-[illegible] տալիս է նորա նուիրական ուխտին կատարումն, օտա՛ր հողի վերայ, իտալ՛ական երկնքի տակ, հեռի՛ այն ուխտաւոր հողից, որին կպած էր նորա սիրտն ու միտքը և ուրեղ անգութ հալածանքից աւելի, ոչինչ չէին խոստանում նմա հոգևորական տգիտութիւնն ու անմիտ զուռզութիւնով սնանուած ոսխերիմ հոգևորական բնաւորութիւնը...... Այո՛, Մխիթար հեռի էր պո՛լիտիքական կրթութիւնից:

Այն հին սխոլ՛աստիքական զարգացումը դրականութեան, որ Թագաւորում է և մինչ այսօրս նորա Միաբանութեան մէջ, փանատիքոս՝ ամենայն ազատ շարժում Թուլացնող կա-

թուլքականութեան տակ, մեծ ապացուցութիւն կարող է լինել վերցիշած մաքին: Նոյն իսկ Քէմփացու աղօթագրի թարգմանութիւնը (De imitatione Christi) և Մխիթարի ուրիշ, կրօնական բովանդակութեան աշխատութիւնները խօսում են մի մասնով մեր յայտնած մաքերի օգտի համար:

Իւ այսպէս, Մխիթարը երևում է մեր առաջև մի միայն մի եռանդնոտ հայրենասէր (patriote), որ հաստատուն բնաւորութիւնով հալածում է այն միտքը, թէ պիտոյ է հայկական բնաւորութիւնը աշխատասիրութիւնն է և այդ միտքը, շատ թէ քիչ, ինչպէս բնական է կարծել, պայմանաւորված է այն շարունակ և մշտական հալածողութիւններով, հոգևորականութեան կողմից, որոնց ենթակայ էր նորա անխարդախ ձգտումների յայտնագործութիւնը:

Այդ, ընտանեկան սէրով և հաստատուն բնաւորութեամբ (էներգիայով) միայն, Մխիթար և Ներսէս մօտենում են մին մինի. ուրիշ յարաբերութիւններով, Ներսէս, մեր անձնական կարծիքով, բարձր է երևում մեր առաջև. և այդ այնքան աւելի, եթէ մտաբերենք Ներսիսեան դպրոցի շինութեան նպատակը՝ պատրաստել արժանաւոր հոգևորականներ, որոնք կարող լինէին Հայերի մէջ տարածել բարոյականութեան սկիզբներ և գիտութիւնների այլ և այլ ճիւղեր:

Իւր գործունեայ հաղորդակցութիւններով Ռուսիայի և Թիւրքիայի մէջ բորբոքուած պատերազմներում, նա կամենում է, ըստ երևոյթին, Հայերին աւելի քաղաքական ազատութիւն պարգևել, հրաւածելով Թիւրքիայի նեղեալ ժողովուրդը և հաստատելով, այդպէս, նորանց խրատակէր ռուս Տէրութեան տակ..........

Որքան աւելի մեծ գին պիտի դնել, իմ կարծիքով, նորա քաղաքականութեան մաքուր և օգտաւէտ սկիզբներին, որ նորա մանկութեան և այրութեան գրեթէ բոլոր տարի-

ները սահել են միայն էջմիածնական մայր պատերի մէջ, որտեղ, ինչպէս համոզուած եմ, թագաւորումէր, մանաւանդ այն ժամանակ, սխոլաստիքական ուղղութիւն և ատելութիւն դէպի ազատ մտածութեան պատիւը:

Ուշի ուշով նայելով նորա գործերի վերայ, թէ իւր արքեպիսկոպոսութեան ժամանակ Թիֆլիսում, և թէ պատրիարքութեան ժամանակ Էջմիածնում, մենք տեսանումենք, որ այդ անձը իւր, այսպէս ասել, դիպլոմատիքական (տէրութենական) յարաբերութիւնների մէջ գրեթէ ամէն հարցում աչքի առաջն է ունեցել հայրենիքի շահերը, ուստի և ամենամեծ խոհեմութիւնով և զգուշութիւնով է յարաբերուել դէպի նորա վճռումը: [1])

Կարելի է մեղադրուեմ այն բանի մէջ, իբր թէ ես, իմ համեմատական հայեացքի մէջ, շատ քիչ չափով բաշխեցի ծառայութիւնները Մխիթարին, որի արդիւնքի պտուղըն այնքան նշանաւոր եղաւ, հին հայկական գրականութիւնը վերականգնելու և նորան, այսպէս ասել, հանրահռչակ կացուցանելու մտքով: Ահա. թէ և մեծ մասնով այլ կէտից

1) Շտապումեմ յայտնել, այս համեմատութեան ապացուցութեան ժամանակ մեր ձեռքն ընկած «Համառօտութիւն անցից քրիստոսակերտ մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի» անունով գրքի մասին, տպ. 1853 թ. Թիֆլիսի մէջ:

Հայ-հասարակութեան՝ սորա բովանդակութեան հետ ծանօթացնելը թողնելով ապագայ ժամանակին, յաւելացնե՛նք այստեղ, որ այս գրքի ընթերցումը խո՛ր տպաւորութիւն գործեց մեզ վերայ:

Նա պարունակումէ իւր մէջ, գլխաւորապէս, Եփրեմ կաթողիկոսի, բայց աւելի Ներսէս արքեպիսկոպոսի (եւ ապա կաթողիկոսի) դէպի պարսկական Տէրութիւնը գրած, եւ այնտեղից, ինչպէս պատասխան, ուղղած նամակների մի կարգ, որոնք խօսումեն այն յափշտակութիւնների եւ գրկանքների մասին 1825—1839 թ. թ., որոնց պարսկական բարբարոսութիւնը ենթարկեց հայութեան:

Ուրախալի է, մանաւանդ, տեսանել այստեղ. թէ խորամանկ պարսկական բռնաւորութիւնը, Ներսէսի բաւական նուրբ քաղաքականութեան շնորհով, ինչպէս է խոնարհում իրաւունքի առաջեւ.........

*ես նայում եմ նորա, արդարև կարի աշխատասէր Միաբանու-թեան վերայ, քան սովո՛ր են նայել առհասարակ մեր մէջ,— պիտո՛յ է, միայն թէ մոռանալ՝ որ մեր խօսքն այս տեղ յատկապէս Մխիթարի արժանաւորութիւնը որոշելու վերայ է, և ոչ նորա հիմնած եղբայրութեան, որի արդիւնքը հեռաւոր ապագայի մէջ հիմնադիրը, թերևս, չէր և կանխատեսանում, նորա բոլոր լրութեան մէջ. այնպէս որ այդ տեղ մեզ զար-մացնում է ո՛չ այնքան նորա ստեղծուածի հսկայ արդիւնքը, որքան նորա էներգիան՝ պինդ մինչ երկաթի կարծրութիւն բնաւորութիւնը, որանով նա անընդհատ մաքառել է իւրեան շրջապատ խաւարի հետ....... Ես սո՛վոր եմ, դարձեալ, որ Մխիթար, ըստ քաղաքականութեան, կարի աննշան տեղն է գրաւում Ներսէսի հետ համեմատած, թէ և Պատմութեան կարեկցութեան ձեռով, նա բարձրանում է յարգութեան գրե-թէ մինչև նոյն աստիճանը, որի վերայ կանգնած է Ներսէս: Այլ մտածելի՞ բան է, արդեօք, քաղաքական մարդ սպասել Բարեխիղճ միանձնուհիների դաստիարակութիւնից, որ ազդումէր նորա զգացումների սխալ՝աստիքա-կրօնական ուղղութեան վե-րայ և միայն......*

*Մի բան ևս. այսքան հայրենասիրական գործողութիւն-ներից յետ, որոնք կենդանի կերպով մինչ այսօրս վկայումեն թէ Ներսէս չէ՞ր դաւաճան ազգային շահերի, ո՞րպէս ար-դեօք, բացատրել պ. Նալբանդեանի արտաւորող արձագան-քը Ներսէսի յանձնարարութեան վերայ Խալիբեաններին, եկե-ղ՛եցական տարեկան եկամուտների մասին....*

*Ես հաւատո՛ւմեմ այդ յանձնարարութեան եղելութեան (և անկարելի ևս է չհաւատալ), բայց ես չեմ համաձայնում այն տեսութեան հետ, որ կամենումէ նորան դորանով դա-ւաճան ցոյց տալ ազգային շահերի դեմ, աչքի առաջև ու-նենալով այն հանգամանքները, որոնց մէջ Ներսէս այնժամա-նակ գտանվումէր:*

Չնայելով, որ մեզ շատ ցանկալի էր համեմատութեան տակ ձգել Սերաֆէսի գործունէութիւնը արդի բարձրաստիճան հոգևորականների կեանքի հետ (որանով անշո՛ւշտ մի քանի խիստ հարկաւոր ճշմարտութիւններ երևան պէտի հանէինք) —ա՛յն ամենայնով, մեր գրիչը լռում է այստեղ, տեղի տալով մի քանի դժուարութիւններից, որոնք պատահելու էին մեզ անշուշտ այդ դիպուածում: Սակայն ես դարձեա՛լ նպատակիս հասած կլինեմ, եթէ, ընթերցողներս, լինէի՛ն դոքանք աշակերտներ՝ թէ աղատ քաղաքացիներ, մեծեր թէ փոքրեր, ներելով իմ կամաւոր թուլութեան, ականջ դնէին մեր արտայայտած մտքերին, հասկանալու գիտակցապէս՝ թէ ի՛նչպէս էին մեր հոգևոր առաջնորդները (որոնց ձեռում դտանվում է ազգի փողը և իշխանութիւնը) ջիսուն տարի սորանից յառաջ, և ի՛նչպէս պէտք է լինեն նորանք մանաւանդ հիմայ, երբ XIX-դ դարը թախանձողապէս պահանջում է այդ տեսակ մարդկերից խիստ շատ աչքառածներ և գործունէութիւն, որոնց նպատակը լինէր՛ լուսաւորել ժողովրդին, բարւոքելով նորա տնտեսական դրութիւնը և հանելով նորան, այդպէսով, խեղճութիւններից:

## ՎԵՐՋ.

Дозволено цензурою. Тифлисъ, 5-го Марта 1874 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.

Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР

14648 - 14655.

2013